ՍՈՒԴԱՆՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՕԴԱՉՈՒՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԵՑԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Դեկտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սուդանում աշխատող Հայաստանի քաղաքացիական ավիացիայի մի խումբ օդաչուների: Նրանք Մայր Աթոռ էին եկել իրենց երախտագիտությունը հայտնելու Վեհափառ Հայրապետին Մայր Եկեղեցու այն աջակցության համար, որ ցուցաբերվեց նոյեմբերի 17-ին Սուդանում ավիավթարից զոհված իրենց գործընկերների հուղարկավորության կազմակերպման գործում: Օդաչուներն իրենց մասնավոր երախտագիտությունը հայտնեցին Սուդանի հոգևոր հովիվ Տ. Մյուռռն քհն. Սարգսյանին, որն անձամբ էր մեկնել դեպքի վայր և ապահովել աճյունների տեղափոխումը Հայաստան: Տեղափոխման օրը Խարթումի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում կատարվել էր նաև հոգեհանգստյան արարողություն:

Վեհափառ Հայրապետն իր վշտակցությունը հայտնեց օդաչուներին՝ զոհված ընկերների համար՝ հայցելով Սուրբ Հոգու շնորհով Տիրոջ մխիթարությունը զոհվածների հարազատներին ու մտերիմներին:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ մեկօրյա հավաք-խորհրդակցություն՝ «Եկեղեցու դերը աղքատության հաղթահարման գործընթացում» թեմայով: Հավաքի կազմակերպիչն էր Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան Կլոր սեղանը:

Հավաքի մասնակիցներին հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Հայաստանում աղքատության հաղթահարման խնդիրների և այս հարցում Եկեղեցու ունեցած դերի մասին զեկուցումներով հանդես եկան ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղանի խորհրդի անդամ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Կաթոլիկ օգնության ծառայության Կովկասի տարածաշրջանի ներկայացուցիչ Ռիչարդ Հոֆմանը, «Հայաստանյան էկումենիկ եկեղեցական ֆոնդ» փոխատվական հիմնադրամի տնօրեն-կառավարիչ Տիգրան Հովհաննիսյանը, այս խնդիրներով զբաղվող պետական այրեր և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: